

# Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 52

**Աստձոյ կապակցութիւնը չարի ու մեղքի հետ** – Առաւել այդ համարներին որը արդէն դիտել ենք, որոնք բացատրում են մարդկային բոլոր թէ լաւ եւ թէ վատ կացութիւնների վրայ Աստձոյ կարգադրութիւն եւ տիրապետութիւնը, նաեւ կան մի քանի Սուրբ Գրային հատուածներ որոնք ուղղակի խօսում են Աստձոյ չարի եւ մեղքի հետ ունեցած առնչութեան մասին: Յոր 2:10ի մէջ Յորն ասում է «Միայն բարիքը ընդունենք Աստուածանից ու չարիքը չընդունենք»: Թէպէտ այն սատանան էր որ յարձակել էր Յորի վրայ, այն ամէն ինչ որ պատահեց՝ թէ բարին եւ թէ չարը կարգադրւած էր Աստձոյ: Յոր Աստձուն եւ Նրա նկարագիրը նանաչելով, հաւատարիմ մնաց, իմանալով որ Աստուած իր վրայ եղած բոլոր բաների վրայ դեկավար է:

Աստուածաշնչի մէջ շատ հատուածներ կան որոնք շեշտակի եւ անկասկածելի կերպով նշում են թէ նոյնիսկ չարը Աստձոյ է պատնառացած (Յոր 42:11, Եսայիա 45:7, Ամովս 3:6, Ողբ Երեմիա 3:37–38): Այս բոլոր հատուածների մէջ փորձանք, աղէտ, կամ վատ բաները թարգմանել են նոյն Եբրայեցերէն ՐԱՀ բառից, որը շատ յանախ թարգմանւած է որպէս չար կամ պղծութիւն (Ծննդոց 6:5): Բոլոր այս համարները շատ զօրաւոր են, ու գուշակութեան կամ կռահելու տեղ չեն թողնում: Բաները չեն պատահում դիպումների ու արկածների բերմամբ: Աստուած գերիշխանութեամբ կարգում ու պատնառում է բոլոր այն ինչ որ տեղի է ունենում, խաղաղութիւնն ու ձախորդութիւնը, բարին ու չարը, Իր նպատակների համեմատ ու վերջնականապէս Իր փառքի համար: Կարեւոր է նշել թէ այս համարները չեն ասում որ Աստուած չարութեան հեղինակն է ոչ էլ նրանք ասում են թէ Աստուած չարութիւն է անում:

Պարզապէս որ չկարծենք թէ այսպէս հատուածներ միայն սահմանւած են Հին Կտակարանին, այստեղ են Նոր Կտակարանից մի քանի համարներ (Յովհաննէս 12:37–40. Բ. Թեսաղոնիկեցիս 2:10–12, Ա. Պետրոս 2:7–8): Դարձեալ այս խորհուրդը կապ չունի ապագային մարդու կատարելիք արարքների Աստձոյ նախատեսութեան, կամ թէ եղելութիւնների մասին Նրա թուլատրութեան: Այլ Աստուած է այն բոլոր եղելութիւնների պատնառողը, Իր նպատակների իրագործման համար:

Նախկինում յիշածի համեմատ, համակատարութեան վերակազմ վարդապետութիւնը, եւ նախախնամութեան ուսուցմունքը ընդհանրապէս, որն սովորեցնում է թէ տիեզերքի մէջ բոլոր տեղի ունեցած եղելութիւնների նախնական կամ գերագոյն պատնառը Աստուած է, Որն գերիշխանութեամբ դեկավարում է բոլոր բաները, ներառեալ մարդկանց բոլոր չար եւ պիղծ արարքները, ու հասցնում է նրանց իրենց մտադրւած վերջնականութեան – այս ուսուցմունքը Գրիստոնեաների մեծամասնութեան կողմից հանդիպում է մեծ հակառակութեան ու մինչեւ անգամ ատելութեան, որն հոչակում են թէ Աստձոյ մեծութիւնը որեւէ կերպով չի կարող կապակից լինել չարութեան եւ մեղքին, ու նաեւ շեշտում են մարդկային ազատ կամքը: Այս վարդապետութիւնը նրանց համար գարշելի է:

Վերջապէս հասնում են մարդկային պատմութեան ամենաչար եւ ամենագարշելի արարքին, որը գտնում է Նոր Կտակարանի էջերում, այսինքն Տէր Յիսուս Գրիստոսի խաչելութիւնն ու մահը: Շատ լաւ ծանօթ ենք պատմութեան, դերակատարներին ու վերջնական արդիւնքին: Բայց առաջնակները, ներշնչւած ու լուսաւորւած Սուրբ Հոգուց, այս ցաւալի եղելութեան լրիւ ենթահողը տեսնել (Գործք Առաքելոց 2:22–23, 4:24–28): Առաջնակները միմիայն նախատեսութիւնից եւ մարդկանց արարքների հիման վրայ կարգադրութիւններ անելուց շատ աւելին վերագրեցին Աստձուն: Նրանք ուղիղ հասկացան Աստձոյ գերիշխան ու անստանալի ձեռքը ամէն բանի մէջ: Տէր Յիսուսի մահը սահմանւած էր Աստձուց, ոչ թէ միայն իր ընդհանուր եղելութեան կարելութեամբ, այլ նաեւ նրա ամէն մի մանրամասնութեամբ, ներառեալ իւրաքանչիւր մասնակից անհատ եւ դրա բոլոր արարքները՝ թէ բարին եւ թէ չարը: Աստուած է սահմանում մարդու բոլոր եղելութիւնների թէ միջոցները եւ թէ նպատակները: Ինչպէս Քալիքն է ասել «Ամէն բան որ տեղի է ունենում հոսում է Աստձոյ յաւիտեանական ու անփոփոխ խորհրդից»:

Թէպէտ ամէն մի արարք սահմանւած եւ տնօրինւած էր Աստձոյ խորհրդից, սրանք ազատաբար գործադրեցին մեղաւոր մարդկանց կողմից, ու նրանք այս արարքների համար պատասխանատու են: Աստուած չի խախտում մարդկային ազատութիւնն ու պատասխանատուութիւնը: Աստուած մարդկանց կողմից կատարւած կամովին ընտրութիւններով իրագործում է Իր ծրագրները: Սուրբ Գիրքը այս չար արարքների համար չի մեղադրում Աստձուն ոչ էլ Նրան մասնակից համարում կատարած չար արարքների, այլ լրիւ մեղադրանքը ու դատապարտութիւնը լիովին եւ արդարացի կերպով վերագրում է մասնակից եղող մարդկանց (Գործք Առաքելոց 2:22–24):

Այս վարդապետութեան վերաբերեալ Ուէստմինիսթըրը Հաւատոյ Հանգանակը նշում է «Աստձոյ ամենակարող գործութիւնը, անգնելի իմաստութիւնը, եւ անվախման բարութիւնը այնպէս են յայտնում Նրա նախախնամքի մէջ, որ այն երկարում է նոյնիսկ մինչեւ առաջին անկումը, եւ հրեշտակների ու մարդկանց բոլոր ուրիշ մեղքերի վրայ, ու այդ ոչ թէ միայն լոկ արտօնութեամբ, այլ այնպէս որ միացած է ամենաիմաստուն եւ ամենագորաւոր կապով, կարգադրելով ու կառավարելով նրանց զանազան արտօնութեամբ, Իր սուրբ նպատակների համար, բայց եւ այնպէս դրանց մեղապիտութիւնը սկսում է միմիայն արարածից, ու ոչ թէ Աստձուց, Որը ամենասուրբ եւ ուղարար լինելով ոչ է եւ ոչ էլ կարող է լինել մեղքի հեղինակը կամ նրա վաւերացնողը» (Գլուխ 5, բաժին 4):